ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/55

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 27.07.2021թ.),

քննելով Ծաղկաձորի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) Ծաղկաձոր համայնքի Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 21.07.2021թ. ներկայացված (22.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/55 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Երվադա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 21.07.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Ծաղկաձորի համայնքապետարանի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է “ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9” ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի Հրավերով նշված չի եղել, որ այն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսվելը:

Ավելին, վերոհիշյալ հրավերով /բաժին 7/ պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Մասնավորապես, Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի 20.07.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, քանի որ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն, ուստի մասնակիցներին 22.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրում են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի շրջանակներում խախտվել են «Երվադա» ՍՊԸ-ի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին»:

Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

Միևնույն ժամանակ հայտնել ենք, որ Ընթացակարգի հրավերով /բաժին 7/ պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի հրավերի՝

4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի հիման վրա հայտարարված հրավերների օրինակելի ձևում ընդհանրապես բացակայում է հայտի ապոհովմանը նվիրված բաժինը:

Այնուհետև www.gnumner.am կայքում հրապարակվել է Ընթացակարգի 20.07.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունը, որին ծանոթանալով՝ Բողոքաբերը հայտնաբերել է, որ այդ արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, քանի որ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն՝ ուստի մասնակիցներին 22.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրում են գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Այսինքն՝ միայն ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արձանագրությունները ուսումնասիրելուց է պարզվել, որ տվյալ մրցույթը, իբրև թե, հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն և որոշում է կայացվել մասնակիցներին 22.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների՝ ինչը առհասարակ չի արձանագրվել Հրավերով և դեռ ավելին, գնահատող հանձնաժողովի գործողությունները ակնհայտ անհավասար պայմանների մեջ են դրել հնարավոր բոլոր մասնակիցներին:

Մասնավորապես, եթե տվյալ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն, ապա հրավերով չպետք է պահանջվեր հայտի ապահովում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն, քանի որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների,

աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Այսպիսով, նման պայմաններում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի և/կամ 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ դրանով իսկ խախտելով նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետով կայացրած որոշումը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ անցկացվելու վերաբերյալ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>Ծաղկաձորի համայնքապետարանի ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ծաղկաձորի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.07.2021թ. թիվ 351 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր՝ 22.07.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/1805-2021 գրության՝ հայտնում եմ հետևյալը.

Ծաղկաձոր համայնքի կարիքների համար <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/9>> ծածկագրով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ՝ <<Ծաղկաձոր համայնքի Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների>> ձեռքբերման նպատակով:

Վերը նշված ընթացակարգը իրականացվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջամակներում, և ֆինանսավորումն իրականացվում է համայնքային ու պետական բյուջեներից՝ համապատասխան մասնաբաժիններով: Եվ քանի որ պետական բյուջեի մասնաբաժնով ֆինանսական միջոցները դեռևս հաստատված չեն, ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որը նշված է եղել հրավերի Հավելված 7՝ Գնման պայմանագրի նախագծի 8.15 կետում:

Հրավերով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ներկայացնի հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Նման պահանջ սահմանվել է հիմք ընդունելով և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 32-րդ կետի 20 ենթակետի դրույթներով, այն է՝

20) եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է բազային միավորի

քսանհինգապատիկը, և կնքվելիք պայմանագրի կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Տվյալ դեպքում հաստատված ֆինանսական միջոցների չափը կազմել է 34359620 /երեսունչորս միլիոն երեք հարյուր հիսունինը հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.07.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ծաղկաձորի համայնքապետարանը Ծաղկաձոր համայնքի Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն:

2. «Երվադա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մասնավորապես գտնում է, որ խախտվել է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի և/ կամ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» և «Երվադա» ՍՊ ընկերությունների կողմից սահմանված ժամին և սահմանված կարգով շտկվել են անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս հայտերը գնահատվել են բավարար:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, քանի որ մրցույթը հայտարարվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով Ընկերություններին 22.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ միաժամանակյա բանակցություններին ներկա էր «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրենը, ով վերանայեց իր գնային առաջարկը և պայմանագրի կատարման համար առաջարկեց ամենացածր գնային առաջարկը և որոշվեց Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին, իսկ «Երվադա» ՍՊԸ-ին՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի 21.07.2021թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, Ծաղկաձորի համայնքապետարանի 23.07.2021թ. թիվ 351 գրությունը՝ կից նյութերով, «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում,*** որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:*** …

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետով սահմանվել է, որ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:…***

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում՝ ***բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ.***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ ***գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝***

ա. ***ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ***, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

(...)

Եվ այսպես, Ծաղկաձորի համայնքապետարանը Ծաղկաձոր համայնքի Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Երվադա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» և «Երվադա» ՍՊ ընկերությունների կողմից սահմանված ժամին և սահմանված կարգով շտկվել են անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջիններիս հայտերը գնահատվել են բավարար:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, քանի որ մրցույթը հայտարարվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով Ընկերություններին 22.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ միաժամանակյա բանակցություններին ներկա էր «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրենը, ով վերանայեց իր գնային առաջարկը և պայմանագրի կատարման համար առաջարկեց ամենացածր գնային առաջարկը և որոշվեց Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին, իսկ «Երվադա» ՍՊԸ-ին՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Այսպիսով՝ «Երվադա» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գտնում է, որ խախտվել է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի և/կամ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, մասնավորապես հայտնելով հետևյալը.

«Միայն ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արձանագրությունները ուսումնասիրելուց է պարզվել, որ տվյալ մրցույթը, իբրև թե, հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն և որոշում է կայացվել մասնակիցներին 22.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների՝ ինչը առհասարակ չի արձանագրվել Հրավերով և դեռ ավելին, գնահատող հանձնաժողովի գործողությունները ակնհայտ անհավասար պայմանների մեջ են դրել հնարավոր բոլոր մասնակիցներին»:

Այս տեսանկյունից ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընթացակարգի հրավերի հայտարարության մասում սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և ֆինանսավորումն իրականացվում է համայնքային ու պետական բյուջեներից՝ համապատասխան մասնաբաժիններով: Աշխատանքների կատարման դիմաց վճարումն իրականացվում է սկզբում համայնքի մասնաբաժնի չափով, այնուհետև աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումն հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո իրականացվում է ֆիանանսավորում՝ պետական բյուջեի մասնաբաժնով:

Ընթացակարգի հրավերի հավելված 7-ով՝ պայմանագրի նախագծի 8.15-րդ կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Պայմանագրի նախագծին կից Հավելված 2-ով՝ Ծաղկաձոր համայնքի Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների օրացուցային գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել. «Պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը սկսվում է շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից: Մնացած մասի համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը»:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերից պարզ է դառնում, որ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, այն է՝ առանց

ֆինանսական միջոցների, ուստի նման պայմաններում, հաշվի առնելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և Ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետը, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերություններին հրավիրելով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների գործել է իրավաչափ, հետևաբար բողոքի պահանջը, այն է՝ պարտավորեցնել «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետով կայացրած որոշումը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ անցկացվելու վերաբերյալ, ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիտարկմանն, որ եթե տվյալ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն, ապա հրավերով չպետք է պահանջվեր հայտի ապահովում, մինչդեռ Ընթացակարգի հրավերով սահմանվել է հայտի ապահովման ներկայացման պահանջ, ապա սույն մասով հարկ եմ համարում ընդգծել, որ նման դիտարկումն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում՝ ***<u>բացառությամբ</u> այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:***

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ համաձայն ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար 2021 թվականին կատարվող գնումների պլանի՝ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվող գնման առարկայի համար հաստատված ֆինանսական միջոցների չափը կազմել է 34 359 620 ՀՀ դրամ, այսինքն՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընթացակարգի հրավերի հայտարարության մասում սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է

ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և ֆինանսավորումն իրականացվում է համայնքային ու պետական բյուջեներից՝ համապատասխան մասնաբաժիններով: Աշխատանքների կատարման դիմաց վճարումն իրականացվում է սկզբում համայնքի մասնաբաժնի չափով, այնուհետև աշխատանքների մնացած մասի կատարման հիմնավորումն հավաստող փաստաթղթերի ներկայացվելուց, հաստատվելուց և ֆինանսական միջոցներ ստանալուց հետո իրականացվում է ֆիանանսավորում՝ պետական բյուջեի մասնաբաժնով:

Պայմանագրի նախագծին կից Հավելված 2-ով՝ Ծաղկաձոր համայնքի Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների օրացուցային գրաֆիկով, աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել. «***Պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասը սկսվում է շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից: Մնացած մասի համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը***»:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքները, որ նախ՝ Պատվիրատուի գնումների պլանի համաձայն Ընթացակարգով ձեռքբերվող գնման առարկայի համար հաստատված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, և երկրորդ՝ Պայմանագրի նախագծին կից Հավելված 2-ի՝ Ծաղկաձոր համայնքի Սուրբ Հարություն եկեղեցու տարածքի հարակից զբոսայգու կառուցման աշխատանքների օրացուցային գրաֆիկի համաձայն կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կազմակերպված լինելու պայմաններում Պատվիրատուն՝ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետով սահմանելով հայտի ապահովման ներկայացման պահանջ, գործել է Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանմամբ:

Այսպիսով՝ սույն գործի փաստերի համաձայն՝ գտնում եմ, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Երվադա» ՍՊԸ-ի կողմից 21.07.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**